

Yerevan State University

Faculty of Economics and Management

Short story

"Feud or Friendship"

1st year student: Anna Sargsyan

Written for : Arditi Foundation

Yerevan 2016

## Abstract

Sometimes impossible things may become possible ones. The names Araks and Ararat are not occasional. Araks whose big dream came true, was going to Geneva to study International relations. The first person who greeted her and whom she friendly loved turned to be Turkish. Is it fatal meeting? What thoughts does Armenian girl have? What opinion does Turkish boy have about 1915's Genocide? What does Armenian mother think about this friendship? Can this friendship last? Can by centuries lasted feud become friendship? All these questions and their answers are in this small story.

Ահա եկավ կյանքիս ամենաբաղձալի օրը: Ապրածս 17 տարիների ընթացքում իմ երազանքներն ու նպատակները պսակվում էին մեկ հարցի շուրջ: Այդ երեկո ես մեկ տարով մեկնելու էի Ժնևի համալսարանի միջազգային հարաբերություններ ֆակուլտետում սովորելու: Առավոտն ինձ համար ուրիշ էր, ես գիտեի, որ այսօրն իմ կյանքում առանձնահատուկ է լինելու: Լույսը բացվելուն պես շտապեցի եկեղեցի՝ խնդրելու Աստուծուց լինել ինձ պահապան և ուղղորդել ինձ, որ քայլեմ միայն ճիշտ ճանապարհով, վառեցի երկու մոմ. մեկը՝ պահապան մայրիկիս, մյուսը՝ Ժնևում հաջողություն գործերիս: Ժամերը, որոնք այնքան դանդաղ էին անցնում, լցված էին սպասումներով ու երազանքներով: Օդանավակայան տանող ճանապարհն այս անգամ այնքան ուրիշ էր: Թռիչքից առաջ ամուր գրկեցի մորս, որն անվերջ կրկնում էր, որ զգույշ լինեմ ու ինչքան հնարավոր է շուտ ու շատ բան սովորած վերադառնամ Հայաստան: Ինքնաթիռի թռիչքի հետ կարծես բացվեցին նաև իմ թևերը, որ տանելու էին ինձ դեպի իմ երազանքները: Խոհերը հանգիստ չէին թողնում ինձ: 17 տարեկան աղջնակի սիրտը բաց էր նոր միջավայրի, գիտելիքների, մարդկանց ու իրադարձությունների համար: Ես գնում էի դեպի պայծառ ապագա ու մտածում էի, որ նույնիսկ գուցե չվերադառնամ, սովորեմ ու հաստատվեմ այնտեղ, ու եթե ամեն ինչ բարեհաջող ընթանա, մորս էլ կբերեմ ինձ մոտ: Ես կարծում էի, որ այստեղ ամենակարևոր բաներն են սովորելու՝ չիմանալով, որ ամենակարևորն ինձ հետ իմ առաջին շնչի հետ էր: Ինքնաթիռը վայրէջք կատարեց ու ես, որ դեռ չէի հավատում այս ամենին, ահա այստեղ եմ: Ինձ դիմավորեցին և տարան համալսարանի հանրակացարանը:

<<Առաջին գիշերը Ժնևի հանրահայտ համալսարանում: Միթե՞ հրաշք չէ: Ո՛չ, սա դեռ հրաշք չէ: Իսկական հրաշքները ինձ են սպասում>>,- մտածեցի ես ու երջանիկ ժպիտով պարկեցի քնելու: Առավոտը բացվեց, ու ես շտապեցի համալսարան: Ամենինչ այնքան մեծ ու գեղեցիկ էր: Ես այնքան շփոթված ու վախեցած էի, որ չէի կարողանում

գտնել մեր լսարանը: Համարձակություն հավաքեցի ու առաջին իսկ պատահած երիտասարդին անգլերենով հարցրի.

-Ներեցե՛ք, որտե՞ղ է 208 լսարանը:

-Ինչպես երևում է մենք նույն լսարանն ենք փնտրում,-ծիծաղելով պատասխանեց երիտասարդը,-եկե՛ք, մենք միասին կգտնենք այն:

-Դուք նույնպե՞ս սովորելու եք միջազգային հարաբերություններ ֆակուլտետում,-մի փոքր դադարից հետո շփոթված հարցրի ես:

-Այո՛, ճիշտ այդպես,-նորից ծիծաղելով պատասխանեց նա ու փորձելով անհետացնել լարվածությունը՝ միանգամից անցավ դու-ի,-ի՞նչ է քո անունը:

-Արաքս:

-Արա՞քս,-շփոթված հարցրեց նա և չսպասելով իմ հաստատողական պատասխանին՝ միանգամից շարունակեց,-շատ գեղեցիկ անուն է, իմ անունն էլ Մուրադ է: Արա՛քս, դու իմ առաջին ընկերն ես համալսարանում:

-Ինչպես երևում է դու էլ իմ,-ընկեր բառը լսելը ստիպեց ինձ ազատ զգալ և մի փոքր ծիծաղելով պատասխանել:

-Ահա գրված է 208, մենք տեղում ենք,-ուրախ պատասխանեց նա,-առաջին փորձությունը հաղթահարված է, մենք հաղթեցինք այն միասին, Արա՛քս:

-Այո՛,-ուրախացա նաև ես, և մենք շտապելով մտանք ներս:

Այդ լսարանում մեզ պատմեցին համալսարանի մասին, ծանոթացրին սովորելու ընթացքի հետ և ասացին, որ այսօր ամբողջ օրը մենք նվիրելու ենք համալսարանի հետ ծանոթությանը: Երբ արդեն պետք է դուրս գայինք լսարանից և գնայինք էքսկուրսիաների, ես շփոթվեցի, քանզի ոգևորությունն ու հուզմունքը խանգարել էին, որ հստակ հասկանայի, թե ուր պետք է գնամ: Մուրադը զգացել էր իմ շփոթմունքը և ամբոխի մեջ գտնելով ինձ՝ բղավեց.

-Արա՛քս, արի՛ ինձ հետ, մենք արդեն մի թիմ ենք:

Մենք քայլում և ականջակալներով լսում էինք համալսարանի պատմությունը: Թեկուզ և ժամանակ չէր լինում խոսելու, մենք ամենուր գնում էինք

Մուրադի հետ: Համալսարանն այնքան մեծ էր, որ ամբողջ օրը հազիվ հերիքեց տարածքն ուսումնասիրելու համար: Օրվա վերջում մենք այնքան հոգնած էինք, որ հազիվ էինք շարժվում:

- Արա՛քս, արդեն պետք է քնենք: Վաղը նույն լսարանում ենք, տես էլի չշփոթվես:  
- Չէ՛, արդեն այնքան բան իմացա այս համալսարանի մասին, որ ուզենամ էլ չեմ կարող շփոթվել:

- Հա՛յսօր շատ հոգնեցինք, դե բարի գիշեր քեզ:

- Բարի գիշեր, - ասացի ես ու առաջին օրվանից քաղածս հիշողությունները ուղեղում անընդհատ կրկնելով՝ գնացի դեպի աղջիկների ննջասենյակները:

Սենյակ հասնելուն պես զանգահարեցի մայրիկիս՝ առաջին տպավորություններով կիսվելու:

- Մա՛մ, ամենինչ լավ է, ես այնքան երջանիկ եմ, համալսարանը այնքա՛ն մեծ է:

- Արաքս ջան հաց կերե՞լ ես, տա՞ք է այդտեղ, - առաջին հարցերը, որ ցանկացած հայ մայր տալիս է իր արդեն մեծ, բայց և փոքրիկ աղջկան:

- Մամ ջա՛ն, բա հո սաված չեմ մնացել, ամենինչ լավ է հանգիստ եղիր: Մի տղայի հետ եմ ծանոթացել, այնքան լավն է, ինձ օգնում է, որ չկորեմ այս մեծ համալսարանում:

- Ինչ լա՛վ է, ո՞վ է ազգությամբ:

- Մամ ինչ տարբերության, ժամանակ չի եղել չեմ հարցրել, բայց շատ ընկերասեր մարդ է:

- Ճիշտ ես ասում, Արաքս ջա՛ն, տաք հագնվի, բոլորին չվստահես զգույշ կլինես, դե բարի գիշեր, բալե՛ս:

- Հա մամ ջան, բարի գիշեր, - անջատեցի հեռախոսն ու մորս ձայնը լսելուց հետո հանգիտ պարկեցի քնելու:

Օրվա տպավորություններն ու նոր օրվա սպասումները չէին թողնում, որ քնեմ:

<< Ինչքա՛ն բան սովորեցի մեկ օրվա ընթացում, ինչքան լավ երկիր է, դրախտ է, երկիր չէ, բա մարդիկ: Մուրադն էլ շատ լավ տղա է: Տեսնես ո՞վ է

ազգությամբ:Եվրոպական դիմագծեր ունի.բարձրահասակ է ,գեղեցիկ, երևի եվրոպացի է:Բայց անունը Մուրադ է,դժվար եվրոպացի լինի:Գուցե արաբ է ,կամ վրացի:է՛հ, Արա՛քս, ինչ տարբերություն,անջատի՛ր ուղեղդ և քնի՛ր,վաղը նոր ու դժվար օր է լինելու:>>,-մտածեցի ես ու փորձեցի քնել:

Այնքան հոգնած էի,որ առավոտյան շատ դժվարությամբ արթնացա ու կարծես թե ուշանում էի:Վազելով գնացի նույն 208 լսարանը,այնքան ուսանող կար ,որ ազատ տեղ այլևս չկար:Հայացքով սկսեցի փնտրել միակ ինձ ծանոթ մարդու ՝Մուրադի աչքերը:Հանկարծ լսեցի,որ ինչ-որ մեկը գոռում է Արաքս:Ո՞վ պետք է լինի ,Մուրադն է,իր կողքին ինձ համար տեղ էր պահել:

- Արա՛քս,ոնց որ թե լավ ես քնել.նույնիսկ այնքա՛ն լավ,որ երկրորդ օրն ուշանում ես:  
-Խայտառակություն՝ն,շնորհակալ եմ Մուրադ,որ ինձ համար տեղ ես պահել,թե չէ ես կորած էի:

-Վերջացրո՛ւ, Արա՛քս, մենք ընկերներ ենք ,ես միշտ քեզ համար տեղ կպահեմ, դու հանգիստ քնիր,-ծիծաղելով ասաց նա,ու հենց այդ պահին ներս մտան դասախոսները:

Մեզ ասացին,որ այսօր մենք պետք է ուսումնասիրենք դասընթացները և դրանցից ընտրենք մեզ հետաքրքրող առարկաները:Մի քանի դաս ես և Մուրադը միասին գնացինք,այնուհետև մենք բաժանվեցինք ,և ես գնացի հաջորդ դասը լսելու:Այդ ընթացքում ես ծանոթացա Ջոնի և Մերիի հետ,նրանք քույր ու եղբայր էին հենց ժնկից:Վերջին դասը,որ պետք է լսեինք, Ազգամիջյան պատերազմներ դասն էր:Այնտեղ նորից հանդիպեցի Մուրադին:Դասամիջոցին Մուրադն ինձ հարցրեց.

-Ընտրելո՞ւ ես այս դասընթացը:

-Իհարկե,սա շատ կարևոր առարկա է,իսկ դու՞:

-Ես նախընտրում եմ խաղաղություն ազգերի միջև,բայց քանի որ այդպիսի դասընթաց դեռ չկա,ես էլ կընտրեմ,-ծիծաղելով ասաց նա:

Դասընթացի վերջում մենք համեմատեցինք մեր ընտրած դասերն ու հասկացանք,որ ակամայից նույն դասերն ենք ընտրել:Միասին գնացինք գրադարան, վերցրինք անհրաժեշտ գրքերը ,ու քանի որ դրանք շատ էին ու ծանր, Մուրադն

առաջարկեց ինձ օգնել:

Ահա մեկ օր էլ վերջացավ, նորից շտապեցի զանգել մայրիկիս:

-Մամ ջա՛ն, ո՞նց ես:

-Լա՛վ ,դե ասա ինչպե՞ս անցավ օրդ,բալե՛ս, գիտեմ՝ հիմա կջղայնանաս, բայց քեզ համար փաթեթ եմ ուղարկել:

-Մա՛մ, այստեղ այնքա՛ն բան կա: Ճաշարանում տարբեր խոհանոցների կերակուրներ կան:

-Հայկականը չկա, հայկականը՝ Մի քանի օր դրանք կուտես ու քոնը կուզես: Էլի երեխաների հետ ծանոթացա՞ր:

-Հա՛, շատ լավն են բոլորը, ես ու Մուրադը նույն առարկաներն ենք վերցրել, միշտ իրար հետ ենք լինելու:

-Իմացա՞ր որ ազգից է այդ տղան:

- Մա՛մ , մոռացա հարցնեմ, վաղը կհարցնեմ ու քեզ կասեմ: Արդեն ուշ է, ես քնեցի:

Այս անգամ պարկեցի շուտ, որ էլի չուշանամ: Բայց նորից խառնիխուռն մտքերս հանգիստ չէին թողնում:

<<Երևի սա արդեն կդառնա սովորություն. ամեն երեկո քնելուց առաջ մտքումս կամփոփեմ օրս>>:

Արթնացա ու միանգամից վազեցի. այսօր չէի ուշացել, բայց Մուրադն էլի ինձ համար տեղ էր պահել:

-Այսօր այդքան էլ լավ չես քնել, չես ուշացել:

-Չէ՛, շատ լավ եմ քնել: Մուրա՛դ, գիտես մայրիկիս պատմել եմ երեկ քո մասին ու հասկացա, որ մենք մոռացել ենք իրար հարցնել, թե որտեղից ենք մենք եկել:

- Լավ է, որ լավ ես քնել, ես նույնպես շատ լավ եմ քնել:

-Չասացիր ,որտեղի՞ց ես եկել, ես Հայաստանից եմ:

-Արա՛քս, դասախոսը, -շուտափույթ ու փոքր-ինչ շփոթված ասաց նա, ու մենք նստեցինք:

Դասախոսն ասաց,որ այսօր մենք պետք է ներկայացնենք մեզ:Սկսեցինք հերթով ներկայացնել,մի տղա կար ասաց,որ անունն Արարատ է,ես անմիջապես հասկացա,որ հայ է,ասաց ,որ ապրում է հենց այնտեղ Ժնևում:Ծնվել է նույնպես այնտեղ,բայց հպարտորեն նշեց,որ հայ է:Դասախոսն ասաց,որ այդպես էլ հասկացավ իր անունից.չէ՞ որ կրում էր աստվածաշնչյան լեռան անունը:Հերթը հասավ ինձ.ես ասացի,որ ես նույնպես հայ եմ:Անունս Արաքս է:Այդ պահին իմ և Արարատի աչքերը հանդիպեցին իրար:Երկու հայ,այն էլ այդպիսի՝ անուններով ,մեկ վայրում:Հաջորդը Մուրադն էր:Ես անհամբեր սպասում էի Մուրադի հերթին,որ վերջապես իմանամ, թե նա որտեղից է եկել:

-Մուրադ Բայրամով:Եկել եմ Թուրքիայից:Ազգությամբ թուրք եմ,-ասաց նա՝ հայացքը մերթ ուղղելով ինձ,մերթ Արարատին:

Այս լսելով՝ իմ աչքերն էլ սկսեցին փնտրել Արարատի աչքերին:Ես նայեցի նրան ու հասկացա,որ երկուսիս մեջ էլ մի բան փոխվեց,երկուսիս աչքերն էլ նույն բանն էին ասում, ու թվում էր՝ մենք նույն բանն ենք մտածում:Մուրադից հետո ոչ մեկի խոսքը չեմ լսել,ամենինչ լռել էր ինձ համար, ու զգում էի,որ Մուրադն էլ այլևս ոչ մեկի չի լսում,բայց համարձակությունս չէր հերիքում նայել նրան ,առավել ևս խոսել նրա հետ:Ինչ-որ վախ պարուրել էր ինձ:

<<Ես ընկերացել էի մի մարդու հետ,ու՛մ ազգության մասին ծնված օրից միայն վատն եմ լսել,ու՛մ մասին ինքս եմ վատ խոսել ,ու՛մ ատել եմ,ազգություն,ով փորձել է ոչնչացնել իմ ազգը:Բայց նա այնքան լավն էր ինձ թվում,ես երբեք թուրքին այդպես չէի պատկերացնում:Դեռ նախադպրոցական տարիներից ինձ պատմել էին նրա ազգության մասին, ու ես ,չիմանալով ոչ մի թուրքի,սկսել էի ատել նրանց:Ես նրան այնքան հարազատ էի համարում,իսկ հիմա ես նրանից վախենում եմ:Չէ՛ ,չեմ վախենում ,հայը երբեք չի վախենում>>:

Ջանգը տվեց ,ու երբ զգացի,որ հայրենակիցս՝ Արարատը, մոտենում է ինձ,կարծես անսովոր վախս անհետացավ :Ակամայից սկեցի նրա հետ հայերեն խոսել,բայց նա ասաց,որ հայերեն չի հասկանում,սրտիս մեջ ցավ զգալով՝ նորից անցա



անգլերենի: Մենք ծանոթացանք, և ես ամբողջ օրն անցկացրի Արարատի, Մերիի և Ջոնի հետ՝ փախչելով Մուրադից: Բնա՞զդն էր, թե՞ արյան կանչը, չգիտեմ, բայց ամեն ինչ ինձ ստիպում էր, որ լինեմ Արարատի կողքին: Այս օրն էլ ավարտվեց: Նորից սենյակում էի և պատրաստվում էի գանգել մայրիկիս:

- Մամ ես լավ եմ, ամենինչ լավ է, - արագ-արագ խոսեցի՝ խուսափելով մորս՝ Մուրադի մասին հարցից:

- Արաքս ջա՛ն, իմացա՞ր Մուրադը որտեղից է:

<<Նորից այս հարցը, հիմա ես գիտեմ պատասխանը, բայց ինչպե՞ս ասեմ մայրիկիս, որ ընկերացել եմ թուրքի հետ, նա չի հասկանա ինձ>>:

Բայց քանի որ ես խաբել չգիտեի, լեզուս առաջ ընկավ բանականությունիցս.

- Մա՛մ, նա Թուրքիայից է: Մուրադը թուրք է, մա՛մ:

- Վա՛յ, Արաքս ջա՛ն, հեռու մնա՛, բալե՛ս, վտանգավոր է, ուրիշ ընկեր գտի՛ր քեզ, զգույշ մնա՛, հեռու մնա՛:

- Հա՛, մամ ջա՛ն, եղա՛վ: Այստեղ մի հայ տղա էլ կա. անունն Արարատ է: Լավ տղա է, ավստոս հայերեն չգիտի, մեկ էլ մի փոքր պճնամոլ է, նրանից է երևի, որ Հայաստանում չի ապրել:

- Ա՛յ Արարատի հետ ընկերացիր, արյունը ջուր չի դառնա, Արարատը լավն է:

- Մա՛մ, դու նրան չես ճանաչում, ինչպե՞ս իմացար, որ լավն է: Լավ բարի գիշեր:

Այս գիշեր ես հիասթափված էի ինձնից: Ձգում էի ինձ ազգի դավաճան:

<<Երևի Մուրադն էլ է իրեն այդպես զգում. չե՞ որ նա էլ չգիտեր, որ ես հայ եմ: Նա օգնել ու ընկերացել էր հայի հետ: Մայրս ճիշտ է, ես հեռու կմնամ նրանից ու կընկերանամ Արարատի հետ>>: Փորձելով լռեցնել մտքերս՝ վերջապես կարողացա քնել:

Հաջորդ օրը ես նստեցի Մերիի հետ: Ես չէի նայում նույնիսկ Մուրադի ուղղությամբ, բայց զգում էի, որ նրա զույգ աչքերը հետապնդում են ինձ. ես նույնիսկ սկսել էի վախենալ:

Մեկ ամիս շարունակ փախչում էի նրանից: Բայց հասցրել էի նկատել, որ

Մուրադը, լինելով այդքան բաց ու շփվող մարդ, ոչ ոքի հետ դեռ չէր ընկերացել: Այդ մեկ ամիսը ես անցկացրել էի Արարատի հետ: Մեր շփման ընթացքում ես հասկացել էի, որ Արարատը գրեթե չգիտի Հայաստանի պատմության և Հայ գրականության մասին: Որոշեցի գնալ գրադարան և փնտրել Հայաստանի մասին թեկուզ մի փոքրիկ գիրք կամ հոդված: Գրադարանում էր նաև Մուրադը: Մոտեցավ ինձ և ասաց.

-Արա՛քս, ինչու՞ ես փախչում ինձանից: Չէ՞ որ մենք ընկերներ ենք:

-Մենք ընկերներ էինք, քանի որ չգիտեինք միմյանց ազգությունները: Դու թուրք ես, ես հայ, մենք դարավոր թշնամիներ ենք:

-Առաջին իսկ վայրկյանից, երբ դու ասացիր ինձ քո անունը՝ Արաքս, ես հասկացա, որ դու հայ ես, ես չհարցրի քեզ քո ազգությունը, քանզի կռահել էի արդեն և գիտեի, որ եթե հարցնեմ, դու էլ կհարցնես և իմանալով իմ ով լինելը՝ դու կատես ինձ: Գիտեմ, իմ ազգը շատ սխալներ է թույլ տվել, մենք ոչնչացրել ենք միլիոն ու կես հայերի: Միթե՞ քո ազգը սխալներ թույլ չի տվել: Գիտեմ, որ դու աստում ես իմ ժողովրդին: Մանկուց մեզ սերմանել են, որ հայերը մեր թշնամիներն են, իսկ թուրքերը՝ հայերի՝ չնայած նրան, որ արդեն 110 տարի անցել է այդ ոճրից: Միթե՞ վատ հայեր չեն լինում, Արա՛քս: Վատ թուրքեր էլ են լինում: Բայց գիտես, լավերն էլ են լինում: Ես ուսումնասիրել եմ թե՛ մեր, թե՛ ձեր պատմությունը: Չնայած մանկուց ինձ սերմանածին՝ մեղավորությունը հստակ մերն է: Բայց չէ՞ որ պատմությունը արդեն փոշի է դրել այդ էջի վրա, ժամանակն է առաջ նայել: Քո ժողովուրդն է ասում, որ մի ծաղկով գարուն կգա: Արա՛քս, դու այդ ծաղիկն ես: Դու կրում ես այն գետի անունը, որ ողողում է Հայաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի ու Իրանի սահմանները: Չես կարծու՞մ, որ ճակատագիրն է տվել քեզ այդ անունը: Դու կմիացնես մեր ժողովուրդներին:

-Չգիտեմ, Մուրա՛դ, սխալներն այնքան շատ են: Իմ ժողովուրդը աստում է քոնին:

-Գիտես, այս ատելությունը ոչ մի լավ բանի չի հանգեցնի: Պատմությունը նորից կկրկնվի: Բայց մենք կարող ենք կանխել դա: Մենք կապացուցենք մեր ազգերին, որ բոլոր ազգերի մեջ էլ լավ ու վատ կա, սխալ է համատարած կարծիքը: Մենք չենք կարող հավերժ պատասխան տալ մեր պապերի գործած ոճրագործության համար: Լավ, ես չեմ

ուզում միանգամից ազդել քեզ վրա:Մտածի՛ր,դու խելացի աղջիկ ես,քո ազգը չափազանց խելացի է:

Մեր ճանապարհները բաժանվեցին, ու ես շտապեցի իմ սենյակ:Մտքերս այնքան խառն էին,որ ես խուսափում էի գանգել մայրիկիս:Այս գիշեր ինքս էի վախենում ու փախչում սեփական մտքերիցս:

<<Ախր մի քանի օրում ճանաչածս այս թուրք երիտասարդը այնքան էր տարբերվում մանկուց պատկերացրածս թուրքից:Նա շատ ավելի բան գիտեր իմ ժողովրդի մասին,քան շատ հայ երիտասարդներ: Իսկ իմ ժողովուրդը՞,որին դաժանաբար բնաջնջել էր իրենը:Իսկ մայրի՞կս,որ ատում է թուրք մայրերին:Գուցե իրո՞ք այս ամենը մնացել է պատմության փոշու տակ:Գուցե իրո՞ք ժամանակն է բարեկամության:Գուցե մե՞նք ենք մեր ժողովուրդներին սպասող գարնան առաջին ծիլերը:Պետք է փորձել:Հերիք է անվերջ հիշել անցյալն ու տառապել>>: Ու ես՝ 17 տարեկան մի աղջնակ, այդ գիշեր քնում էի,որպես մեծ հեղափոխական:Երկար սպասված հեղափոխության առավոտը բացվեց ,ու ես շտապում էի ՝ Մուրադին ասելու իմ որոշման մասին:Նրան տեսնելով՝ հուզմունքից գրկեցի ու ասացի ,որ մենք նորից ընկերներ ենք:Այդ ժամանակ հայացքս հանդիպեց Արարատի հայացքին,ու հասկացա,որ առաջին դժվարությունը հենց Արարատն է լինելու:Նա կանչեց ինձ և ասաց.

-Արա՛քս,ի՞նչ էր նշանակում քո և այդ թուրքի գրկախառնությունը:

-Արարա՛տ,դու նրան չես ճանաչում ,մի շտապի՛ր հեզնանքով խոսել նրա մասին:

-Իսկ ես չեմ էլ ուզում ճանաչել նրան,հերիք է իմանալ,որ նա թուրք է:Էլ ին՞չ է պետք քեզ նրան ճանաչելու համար:

-Այո՛, նա թուրք է,բայց ամեն թուրք չէ,որ դավաճան ու մարդասպան է:

-Կարճ ասած, Արա՛քս,դու գիտես,ինչ ուզում ես արա:

Այդ օրվանից ես զգում էի,որ գնալով հեռվանում եմ Արարատից ու դրան զուգահեռ գնալով ընկերանում եմ Մուրադի հետ:

Անցնում էին օրերն ու ամիսները:Այդ ընթացքում ես ոչ մի թշնամանք չէի զգում Մուրադի կողմից:Ու այդ զգացումը ավելի էր խորացնում իմ մեջ հեղափոխական աղջնակի ձգտումներս:Թեպետ հաճախ էինք բանավիճում, ու մեր կարծիքները շատ էին տարբերվում ,միշտ գալիս էինք ընդհանուր հայտարարի:Բայց ամեն երեկո մոռս հետ խոսելիս, իմանալով նրա անհանգստությունը, խնամքով թաքցնում էի այն փաստը,որ Մուրադի հետ մտերիմ ընկերներ ենք:

Արդեն 8 ամիս էր,ինչ ժնկում էի:Մեկ ամսից պետք է վերադառնայի Հայաստան,երբ ստացա նամակ,որ հնարավորություն եմ ստացել ուսմանս մյուս 3 տարին էլ մնալ ժնկում:Մուրադն էլ էր շարունակելու այստեղ:Անչափ ուրախ էի:

Ազգամիջյան պատերազմներ առարկայի հերթական դասն էր:Այսօր հերթը մերն էր:Դասախոսությունը Հայաստանի և Թուրքիայի պատերազմի մասին էր:Արարատի ու Մուրադի մեջ սկսվեց անբաժանելի վեճ:Նրանք ասում էին միմյանց վերջին բառերը:Ես գրեթե չէի լսում,բայց Մուրադի մեկ արտահայտությունը սրի նման ծակեց թմբկաթաղանթս ու յաթաղանի պես մխրճվեց սրտիս մեջ`փշրելով իմ`հեղափոխական աղջնակիս դատարկ ու սին հույսերը:Այն էր. <<Դու`ք, հայե՛րդ,ոչինչ չեք հասկանում,պատմությունն է նույնիսկ հեզնել ձեզ,միայն դատարկաբանում եք>>:Այս ասելով` Մուրադն իսկույն ցնցվեց ու հասկացավ,որ սխալ է թույլ տալիս:

Չարաբաստիկ դասն ավարտվեց ու նա շտապեց ինձ մոտ:

-Արա՛քս, սպասի՛ր ,կներե՛ս, նա ինձ դրդեց ,ես չէի ուզում,ախր դու գիտես, որ ես այսպես չեմ մտածում,-բղավելով ասաց նա,որ գուցե և իրավացի էր,գուցե և այդպես էր մտածում ,չգիտեմ,բայց արդեն ուշ էր,չկա ավելի վտանգավոր բան ,քան խոցված սրտով հայն էր:

-Գիտես ,Մուրա՛դ ,ես շատ բան գիտեմ:Այսքան ամիս ճանաչածս Մուրադը միանգամից փոխվեց,պատկերացումներս նորից առաջվանն են,ես սխալվել էի:

-Ախր դու ինքդ տեսար,որ նա ինձ դրդեց,ես չէի ուզում:Այդ վեճի պատճառով դու ուզում ես ջուրը գցել մեր նպատակները:

-Ի՞նչ նպատակ, Մուրա՛դ:Նպատակ չկա:Ասում են՝ճանաչիր ընկերոջդ կովի ժամանակ:Հիմա ես քեզ ճանաչում եմ:

-Ուրեմն Արարա՛տն է պատճառը,թե՞ ես:

-Պատճառն ու հարցը ո՛չ Արարատն է ,ո՛չ էլ դու :Դու լավ մարդ ես,Մուրա՛դ,բայց մենք չենք կարող բարեկամանալ:Հայի ձեռքը չի կարող բռնել այն ձեռքը,որ կոտորել է իրեն:Ես հասկացա,որ այս դեպքում մի ծաղկով գարուն չի գա,մի ձեռքը ծափ չի տա,մի ձյունը ձմեռ չի բերի ,ու մի աղջիկը պատմություն չի փոխի:Այս 110 տարում ոչինչ չփոխվեց ու հիմա էլ չի փոխվի:Քանի դեռ անապատում Դեր Զորի թափառում է ոգին խենթացած Կոմիտասի,քանի թները քամիների բերում են ողբը միլլիոն ու կես հայերի, քանի Հայոց Անի եկեղեցին կարոտ է հայերեն աղոթքին ու քանի դեռ հայր թաց աչքերով նայում է Արարատին ,նայում ու չի հասնում նրա գագաթին, իմ ազգը թշնամի է քո ազգին:

Տարին ավարտվեց ,ու ես շտապեցի մեկնել Հայաստան,քանզի հասկացա,որ դրախտ է միայն այն երկիրը,որտեղ բարձրիկ Սևանն է հանգրվանել ,ու Արագածն է իր բույնը դրել:Հասկացա ,որ ծառը կարող է աճել ու տալ պտուղներ միայն այն հողում,որտեղ արմատներ է գցել:Ինձ հետ էր գալիս նաև Արարատը,մենք նույն ինքնաթիռով վերադառնում էինք Հայաստան:Այս մի թռիչքն էր,որ իսկապես տվեց ինձ թներ,թներ,որ հասնեմ հայրենիքիս ,որ ծաղկեմ ու ծնեմ առյուծներ:Հիմա երազանքներս պսակվում ու հյուսվում էին մեկ բառի շուրջ՝ <<Հայաստան>>:Ես հասկացա,որ Ժնկից տանում եմ ինձ հետ ոչ թե անգնհատալեի գիտելիքներ,այլ արթնացել է իմ մեջ ամենակարևորը,որ ինձ հետ էր իմ առաջին շնչի հետ՝ անսահման սերս դեպի հայրենիք:Վայրէջք կատարելուն պես Արարատի հետ շտապեցինք

հայկական եկեղեցի: Ես վառեցի արդեն 3 մոմ: Մեկը՝ առողջություն  
մայրիկիս, երկրորդը՝ խաղաղություն հայրենիքիս, և վերջինը՝ հաջողություն գործերիս  
միայն այստեղ՝ Հայաստանում: Մոմերը սկսեցին այրվել, ու ես հասկացա՝ երբեք ուշ չե  
հայրենադարձ լինել:

Հետգրություն. Ես, լինելով անսահման հայրենասեր, դեմ եմ գնացել իմ շատ ու շատ  
սկզբունքներին՝ փորձելով հասկանալ կերպարների խոհերն ու հարցին չնայել միայն  
հայերի տեանկյունից: Կարդացողին կարող է թվալ՝ ես կողմնապահ հայրենասեր եմ, ով  
պաշտպանում է միայն ու միայն իր ազգին: Հասկանում եմ ,բնական է: Հայոց վիշտը  
մեր արյան մեջ է, այն միայն հայը կհասկանա: Պատմվածքիս վերջում Արարատն ու  
Արաքսը նույն ինքնաթիռով վերադառնում են Հայաստան: Այս նախադասությունը  
պետք է հականալ և՛ ուղիղ, և՛ փոխաբերական իմաստով: Այո՛, ես հավատում եմ, որ  
սրանից 10, 20, 30 կամ 100 տարի հետո Հայոց հսկա Արարատ լեռն ու խոնարհ Արաքս  
գետը վերադառնալու են Հայաստան: Ու այն օրը, երբ իմ սերունդները Արարատի  
գագաթից մի բուռ հող և Արաքսի ավազանից մի բուռ ջուր կբերեն շիրիմիս, հայի  
սրտին խաղաղություն կիջնի ու իմ հոգին խաղաղ կննջի: Այդժամ գուցե և մեկ ծաղիկը  
գարուն բերի, ու սահմանին հյուսված փշալարն էլ ծաղկի: